ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«23» սեպտեմբերի 2017 թվականի № 115-Ա

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամի գլխավոր տնօրենի փոփոխությամբ պայմանավորված.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամի 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի հաշվետու ժամանակաշրջանի գործունեության ուսումնասիրություն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին՝
   1) 2017 թվականի սեպտեմբերի 25-ից սկսած՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամի գործունեության ուսումնասիրություն:
   2) սույն կետի 1-ին ենթակետի աշխատանքներն ավարտելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրության արդյունքների մասին հաշվետվությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարարի
2017 թվականի սեպտեմբերի 23 թիվ 1151Ա հրամանի

Կարեն Թորոսյան	Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ
Վահան Մարգարյան	Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ
Ժենյա Հարությունյան	Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ
Գայանե Սարկիսյան	Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի վարկային և դրամաշնորհային ծրագրերի վարչության վերլուծության և մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ